ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ4

ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար <<ԱՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-25/109> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի

Գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ <<04>> սեպտեմբերի 2025թ.ժ.16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Արա Ստեփանյան – աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար,

Անդամներ

Արսեն Եփրեմյան- աշխատակազմի կոմունալ տնտեսության, գույքի կառավարման, տրանսպորտի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետ

Քաջիկ Վարդանյան - աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ

Սևակ Քաչարյան - աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջտար մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար

Փայլակ Հակոբյան – աշխատակազմի գնումների բաժնի պետ

1. **Տեղեկություն գնահատող հանձնաժողովի իրավազոր համարվելու մասին**

1.1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնաժողովը բաղկացած է հինգ անդամից և հանձնաժողովի նիստին մասնակցում են հանձնաժողովի չորս անդամները, հետևաբար, Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիս 2017թվականի թիվ 526-Ն որոշման 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն, հանձնաժողովի նիստը համարել իրավազոր և հայտարարել բացված:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

2. **Տեղեկություն հայտերի գնահատման մասին**
   - **2.1 Տեխ Քոնթրոլ ՍՊԸ ԵՎ ԱԾ-ԱՐ ՍՊԸ ՀԳ հայտը կազմած է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ** Հրավերով պահանջվել է <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

N	Փորձառությանը ներկայացվող պայմանները	Պահանջվող փաստաթղթերը և դրանց ներկայացվող պայմանները	Նմանատիպությունը
1	մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող հինգ տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է	Մասնակիցը հայտով ներկայացնում է՝ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ	Գազաֆիկացման շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման նախկինում կատարված պայմանագրերը

	(կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ գնման գնի հիսուն տոկոսից:	կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում հանձման-ընդունման արձանագրության, հաշիվ-ապրանքագրի պատճենը կամ ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտի պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը	

Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

Մասնակցի կողմից հրավերի հավելված 1.3-ով ներկայացված Արարատի համայնքապետարանի և <<ԱՇ-ԱՐ>> ՍՊԸ-ի միջև 2024 թվականի սեպտեմբերի 10-ին կնքված թիվ ՀՀ ԱՄԱՀ-ՄԱԵՁԲ-24/33ՏՀ պայմանգրի պատշաճ կատարումը հավաստող հանձման-ընդունման արձանագրությունները:

- Հրավերով պահանջվել է

Պահանջվող լիցենզիան և ներդիրները« Շինարարության որակի տեխնիկական հսկողություն» առնվազն 2-րդ դասի լիցենզիա

Ներդիր

1. Բնակելի , հասարակական և արտադրկան կառույցներ,
2. Ջերմագազամատակարարում եվ օդափոխություն (օդափոխության, ջեռուցման եվ օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարաման եվ գազամատակարարաման համակարգեր)

Մասնակցի կողմից ներկայացված հայտում բացակայում Բնակելի , հասարակական և արտադրկան կառույցներ ներդիրը:

Հրավերով պահանջվել է ՝ <<Տեխնիկական միջոցներ >> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ տեխնիկական միջոցները.

N	Տեխնիկական միջոցի անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը	Տեխնիկական միջոցի մակնիշը, պետհամարանիշը, (եթե առկա է) և արտադրության	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը	Պահանջվող փաստաթղթերը և դրանց ներկայացվող պայմանները

				տարեթիվը		
1	Սկլերոմետր	ցանկացած	1	ցանկացած	Սեփական կամ վարձակալություն	Մասնակիցը հայտով ներկայացնում է Տեխնիկական միջոցի տեխնիկական անձնագիրը , իսկ վարձակալության դեպքում նաև վարձակալության պայմանագիրը:
2	Բետոնի պաշտպանիչ շերտի որոշման սարք	ցանկացած	1	ցանկացած	Սեփական կամ վարձակալություն	Մասնակիցը հայտով ներկայացնում է Տեխնիկական միջոցի տեխնիկական անձնագիրը , իսկ վարձակալության դեպքում նաև վարձակալության պայմանագիրը:
3	Լազերային չափերիզ	ցանկացած	1	ցանկացած	Սեփական կամ վարձակալություն	Մասնակիցը հայտով ներկայացնում է Տեխնիկական միջոցի տեխնիկական անձնագիրը , իսկ վարձակալության դեպքում նաև վարձակալության պայմանագիրը:
4	Թվային հաստաչափ	ցանկացած	1	ցանկացած	Սեփական կամ վարձակալություն	Մասնակիցը հայտով ներկայացնում է Տեխնիկական միջոցի տեխնիկական անձնագիրը , իսկ վարձակալության դեպքում նաև վարձակալության պայմանագիրը:

Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները

Բացակայում է հայտով ներկայացված տեղեկատվությունը կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող տեխնիկական միջոցների (սարքերի, սարքավորումների) մասին հրավերի հավելված 1.1 -ով՝

հրավերով պահանջվող Տեխնիկական միջոցի մակնիշը, պետհամարանիշը, (եթե առկա է) և արտադրության տարեթիվը, ինչպես նաև բոլոր տեխնիկական միջոցների տեխնիկական անձնագրերը:

- **Հրավերով պահանջվել է <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները.**

N	Մասնագետների		
	Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության կոմիտեի կողմից՝ շարունակական մասնագիտական զարգացման <<Հավաստագրի >> կարգը	Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության կոմիտեի կողմից՝ շարունակական մասնագիտական զարգացման հավաստագրված մասնագիտության անվանումը	Ներգրավվածությունը
1	Առնվազն 2-րդ կարգ	Բնակելի, հասարակական և արտադրական կառույցների ճարտարագետ տեխնիկական հսկիչ	յուրաքանչյուր չափաբաժնի համար առնվազն 1 հոգի
2	Առնվազն 2-րդ կարգ	Ջերմագազամատակարարման և օդափոխության ճարտարագետ տեխնիկական հսկիչ	յուրաքանչյուր չափաբաժնի համար առնվազն 1 հոգի

*Միևնույն մասնագետը /տեխնիկական հսկիչը/ չի կարող առաջարկվել տարբեր չափաբաժինների համար:

Ընդ որում աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը հայտով ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետի (մասնագետների) հաստատած գրավոր համաձայնությունները **/ներկայացված համաձայնագրերում հստակ նշելով աշխատակցի մասնակցությունը տվյալ չափաբաժնին/**՝ մատուցվելիք ծառայություններում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից տրամադրվող հավաստագրի պատճենները.

Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Մասնակցի ներկայացված հայտում բացակայում է՝ հրավերով պահանջվող <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշով սահմանված Բնակելի, հասարակական և

արտադրական կառույցների ճարտարագետ տեխնիկական հսկիչ թվով 3 հոգու, Ջերմագազամատակարարման և օդափոխության ճարտարագետ տեխնիկական հսկիչ թվով 2 հոգի մասնագետները, մասնագետի (մասնագետների) հաստատած գրավոր համաձայնությունները /ներկայացված համաձայնագրերում հստակ նշելով աշխատակցի մասնակցությունը տվյալ չափաբաժնին/՝ մատուցվելիք ծառայություններում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից տրամադրվող հավաստագրի պատճենները. , ինչպես նաև հայտով ներկայացված մասնագետ Ջերմագազամատակարարման և օդափոխության ճարտարագետ տեխնիկական հսկիչ Միքայել Առաքելյանի հաստատած գրավոր համաձայնությունը /ներկայացված համաձայնագրերում հստակ նշելով աշխատակցի մասնակցությունը տվյալ չափաբաժնին/՝ մատուցվելիք ծառայություններում վերջիններիս ներգրավվելու մասին:

2.2 ՇՀԾ ՍՊԸԵվ ՇԻՆԻՆԴՈՒՍՏՐԻԱ ՍՊԸ ՀԳ հայտը կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ մասնավորապես

- Հրավերով պահանջվել է <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

N	Փորձառությանը ներկայացվող պայմանները	Պահանջվող փաստաթղթերը և դրանց ներկայացվող պայմանները	Նմանատիպությունը
1	մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող հինգ տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ գնման գնի հիսուն տոկոսից:	Մասնակիցը հայտով ներկայացնում է՝ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում հանձման-ընդունման արձանագրության, հաշիվ-ապրանքագրի պատճենը կամ ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտի պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը	Գազաֆիկացման շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման նախկինում կատարված պայմանագրերը

Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

Մասնակցի կողմից հրավերի հավելված 1.3-ով ներկայացված 2022-2024թթ ՀՀ Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի և <<Շինինդուստրիա ԳՏԿ>> ՍՊԸ միջև 2022 թվականի սեպտեմբերի 05-ի կնքված թիվ ԱՄԽ-ՏՀ-ԳՀԵՁԲ-22/07-1 ծածկագրով պայմանագրով թիվ 6,7,8

չափաբաժինների(որը վերաբերոլի է գազաֆիկացման աշխատանքներին) գումարը գազմում է 697.000 (վեց հարյուր ինսունյոթ հազար) , որը չի ապահովում թիվ 1 չափաբաժնով գնման առարակի նախահաշվային գնի ՝ 1615200 (մեկ միլիոն վեց հարյուր տասնհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամի չափի 50% ին:

Բացակայում են 2022 թվականի դեկտեմբերի 13-ին կազմված թիվ 1 հանձման-ընդունման արձանագրության Բ-8182453029 հաշիվ ապրանքագիրը, 2024 թվականի հոկտեմբերի 28-ին կազմված թիվ 1 հանձման-ընդունման արձանագրության Բ-1333903035 հաշիվ ապրանքագիրը, 2024 թվականի նոյեմբերի 30-ին կազմված թիվ 2 հանձման-ընդունման արձանագրության Բ-5114511581 հաշիվ ապրանքագիրը:

Բացակայում է ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի <<Բարեկարգում Տնօրինություն>> բյուջետային ՀՄ-ի և <<Շինինդուստրիա ԳՏԿ>> ՍՊԸ -ի միջև 2022 թվականի հոկտեմբերի 20-ի կնքված թիվ ԱՄՓՀ-ԳՀԵՁԲ-16/22-2 ծածկագրով պայմանագիրը, ինչպես նաև 2023 թվականի հունվարի 09-ին կազմված թիվ 2 հանձման-ընդունման արձանագրության Բ-6501362434 հաշիվ ապրանքագիրը:

- **Հրավերով պահանջվել է <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները.**

N	Մասնագետների		
	Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության կոմիտեի կողմից ՝ շարունակական մասնագիտական զարգացման <<Հավաստագրի >> կարգը	Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության կոմիտեի կողմից ՝ շարունակական մասնագիտական զարգացման հավաստագրված մասնագիտության անվանումը	Ներգրավվածությունը
1	Առնվազն 2-րդ կարգ	Բնակելի, հասարակական և արտադրական կառույցների ճարտարագետ տեխնիկական հսկիչ	յուրաքանչյուր չափաբաժնի համար առնվազն 1 հոգի
2	Առնվազն 2-րդ կարգ	Ջերմագազամատակարարման և օդափոխության ճարտարագետ տեխնիկական հսկիչ	յուրաքանչյուր չափաբաժնի համար առնվազն 1 հոգի

*Միևնույն մասնագետը /տեխնիկական հսկիչը/ չի կարող առաջարկվել տարբեր չափաբաժինների համար:

Ընդ որում աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը հայտով ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետի (մասնագետների) հաստատած գրավոր համաձայնությունները /**ներկայացված համաձայնագրերում հստակ նշելով աշխատակցի մասնակցությունը տվյալ չափաբաժնին**/՝ մատուցվելիք ծառայություններում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից տրամադրվող հավաստագրի պատճենները.

Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Մասնակցի կողմից հրավերի հավելված 1.2-ով ներկայացված տեղեկատվությամբ բացակայում են Մկրտիչ Հարությունյան՝ Բնակելի, հասարակական և արտադրական կառույցների ճարտարագետ տեխնիկական հսկիչի և Ռոմմա Օհանյան՝ Ջերմագազամատակարարման և օդափոխության ճարտարագետ տեխնիկական հսկիչի ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից տրամադրված հավաստագրի պատճենները:

- Հրավերով պահանջվել է

Պահանջվող լիցենզիան և ներդիրները

« Շինարարության որակի տեխնիկական հսկողություն» առնվազն 2-րդ դասի լիցենզիա

Ներդիր

3. Բնակելի , հասարակական և արտադրկան կառույցներ,
4. Ջերմագազամատակարարում եվ օդափոխություն (օդափոխության, ջեռուցման եվ օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարաման եվ գազամատակարարաման համակարգեր)

Մասնակցի կողմից ներկայացված հայտում բացակայում են <<Շինինդուստրիա ԳՏԿ>> ՍՊԸ-ի Շինարարության որակի տեխնիկական հսկողության լիցենզիան :

3. Հանձնաժողովի կայացրած որոշումները

1. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 04 մայիս 2017թ 526-Ն որոշման 41-րդ կետը գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել և մասնակիցներին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում մինչև նիստի կասեցման ավարտը շտկել անհամապատասխանությունները:

2. ԱՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-25/109 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի հաջորդ նիստ հրավիրել 2025 թվականի սեպտեմբերի 08-ին ժամը 10.00-ին

Գնահատող հանձնաժողովի նախագահ ---------- Արա Ստեփանյան

Գնահատող հանձնաժողովի անդամներ ---------- Արսեն Եփրեմյան

---------- Քաջիկ Վարդանյան

---------- Սևակ Քոչարյան

Գնահատող հանձնաժողոի քարտուղար ---------- Փայլակ Հակոբյան